ՀՏԴ 1/14

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԷՎՐԻՍՏԻԿ ԴԵՐԻ ՎԵՐԱՀԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ

Աննա Հակոբյան
փ.գ.թ., դոցենտ
Արցախի պետական համալսարան
Արցախ

Անոտացիա

Գիտության փիլիսոփայության և մեթոդաբանության արդիական հարցերից է գիտական ճանաչողության մեջ փիլիսոփայության ունեցած դերի հիմնահարցը:

Հոդվածում հիմնավորվում է, որ գիտության զարգացման արդյունքում դասական իմացաբանության և մեթոդաբանության հիմնական հասկացություններն ու սկզբունքները վերագնահատվում են՝ առաջացնելով փիլիսոփայության էվրիստիկ դերի վերահիմաստավորման անհրաժեշտություն: Վերլուծվում են փիլիսոփայությանը ներքնապես բնորոշ իմացաբանական այն բնութագրերը, որոնցով պայմանավորված է փիլիսոփայության էվրիստիկ ներուժը:

Բանալի բառեր՝ *դասական իմացաբանություն, գիտության զարգացում, էվրիստիկ դեր, սիներգետիկա, պոստմոդեռնիզմ, ոչ դասական էպիստեմոլոգիա:*

Փիլիսոփայության էվրիստիկ դերի հիմնահարցը փիլիսոփայության պատմության ընթացքում շարունակաբար քննարկվել է, բայց դեռևս մնում է վիճահարույց: Արդի փուլում այդ հիմնահարցի վերանայման անհրաժեշտությունը պայմանավորված է գիտության մեջ կատարված օբյեկտիվ զարգացումների արդյունքում գիտական իմացության մեթոդաբանական հայեցակարգում տեղի ունեցած փոփոխություններով, որոնք պարտադրում են բացահայտել մի կողմից ոչ դասական և ետոչդասական գիտության էությունը, մյուս կողմից վերագնահատել դասական իմացաբանության և մեթոդաբանության հիմնական հասկացություններն ու սկզբունքները: Նման վերագնահատման խիստ կարիք ունեն նաև փիլիսոփայության՝ որպես գիտական իմացության կրեատիվ գործոնի մասին դասական պատկերացումները:

Ճանաչողության դասական տեսությունը մեծ հաջողությունների է հասել պատրաստի, ավարտուն գիտելիքի կառուցվածքի վերլուծության և հիմնավորման հարցերում՝ տեսադաշտից որոշակիորեն դուրս թողնելով գիտելիքի աճի և զարգացման հիմնահարցերը: Գիտության՝ որպես ինքնազարգացող համակարգի, ուսումնասիրության ավելի լայն հնարավորություններ են առաջացել վերջին երկու-երեք տասնամյակներում, երբ ունիվերսալ էվոլյուցիոնիզմի գաղափարներն ամրապնդվեցին բնագիտության մեջ՝ նշանավորելով գիտության անցումը ետոչդասական փուլին, որտեղ պատմականության սկզբունքը դարձավ իմացության հետազոտության առաջատար սկզբունքներից մեկը:

Ունիվերսալ էվոլյուցիոնիզմի, ինչպես նաև սիներգետիկայի գաղափարների ազդեցությամբ՝ արդի գիտական իմացության մեթոդաբանական հայեցակարգերի հիմնական միտումը անցումն է ավարտուն գիտելիքի ուսումնասիրությունից դեպի նոր գիտելիքի ձևավորման օրինաչափությունների ուսումնասիրությունը:

Անցած հարյուրամյակի գիտական ճանաչողության փորձը հաստատում է, որ որքան գիտությունը հեռանում է իր դասական շրջանից դեպի ոչ դասական, իսկ այնուհետև՝

ետոչդասական շրջան, այնքան ավելի ակնհայտ է դառնում փիլիսոփայության և գիտության փոխադարձ կապը և առաջինի ունեցած ազդեցությունը գիտության զարգացման վրա: Այդ հանգամանքը պայմանավորում է հետդասական շրջանում փիլիսոփայության էվրիստիկ դերի վերաիմաստավորման անհրաժեշտությունը:

Ստորև կներկայացվեն փիլիսոփայությանը նեքնապես բնորոշ իմացաբանական այն բնութագրերը, որոնցով պայմանավորված է փիլիսոփայության ստեղծագործական ներուժը և որոնք ընդհանուր առմամբ անտեսված լինելով դասական էպիստեմոլոգիայի կողմից՝ ընդունելի են դառնում ոչ դասական էպիստեմոլոգիայի շրջանակներում: Ետդասական էպիստեմոլոգիայի դիրքերից փլիսոփայության կրեատիվ հատկությունների ուսումնասիրությունը հանգեցնում է հետևյալ եզրակացություններին.

• Ստեղծագործականությանը նպաստող փլիսոփայական ճանաչողական հիմնական մեթոդներից է **ռեֆլեքսիան**, ուստի փլիսոփայելու բնույթի հասկացման համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում տեսական գործունեության այն ձևը, որն ուղղված է սեփական մտածողության, ինչպես նաև մյուսների մտածողության իմաստավորմանը: Վերջին հաշվով՝ փլիսոփայական ինքնանդրադարձը ամբողջությամբ վերցրած մշակույթի և գիտության, ինչպես նաև դրանց հիմքերի իմաստավորումն է: Առանց մտքի կողմից իր իսկ բովանդակության գիտակցման քննադատական ռեֆլեքտիվ ակտի հնարավոր չէ ուսումնասիրել նոր մտքերի §ծնունդը¦:

• Փիլիսոփայության էվրիստիկ գործառույթի հիմքում ընկած է **տեսական մտահայեցողության մեթոդը**, որը նույնքան ավանդական է փլիսոփայության համար, որքան ինքնանդրադարձը: Փլիսոփայելու գործընթացը ենթադրում է ոչ միայն քննադատական-ինքնանդրադարձային մոտեցում, այլ նաև տրամաբանական եզրահանգման անմիջական արդյունք չհանդիսացող նոր տեսական կառույցների, հասկացությունների սինթեզ, որոնք ընդհանրացման գործողության հետևանք չեն: Անկասկած է, որ փլիսոփայության մեջ հասկացություններն ու կատեգորիաներն ավելի հաճախ առաջանում են մտահայեցողության արդյունքում, որպես վարկած, կռահում, աբստրակցիա, որոնք հետո համադրվում են փորձի հետ, հատուկ գիտական գիտելիքների հետ և արդյունքում՝ կամ հաստատվելով մտնում են հասկացական ապարատ, կամ դեն են նետվում որպես դատարկ աբստրակցիաներ: Դրանով իսկ փլիսոփայությունը շարունակ որոնում և հայտնաբերում է աբստրակտի և զգայական կոնկրետի միակցման ճիշտ չափը: Բացառված չէ, որ այդ որոնումների ընթացքում աբստրակտը մտահայեցողականը հաճախ միակողմանիորեն ուռճացվել են, սակայն այն երբեք չի խզել իր կապերը ռացիոնալության հետ: Շեղվելով էմպիրիկ տվյալներից՝ փիլիսոփայական տեսական մտահայեցողությունն իրականացվում է ռացիոնալիստական հնարների միջոցով, տրամաբանական կանոնների և օրենքների հիման վրա. սկզբունքներից և կատեգորիաներից բխեցվում են դատողություններ իրական աշխարհի, առարկաների և երևույթների մասին:

Փիլիսոփայական տեսական ճանաչողությունը չի կարող գոյություն ունենալ առանց մտահայեցողության, բայց նաև չի կարող լրիվությամբ որոշել իր հիմնախնդիրները՝ հենվելով միայն ինտուիցիայի և ստեղծագործական երևակայության վրա:

Ինքնանդրադարձի և մտահայեցողության մեթոդների կիրառման շնորհիվ փիլիսոփայությունը իրականացնում է յուրահատուկ կանխատեսողական գործառույթ բնական և հասարակական գիտությունների հիման վրա: Փիլիսոփայությունը ստեղծում է նոր կատեգորիաներ և հասկացություններ, առաջարկում է կոնկրետ գիտությունների նկատմամբ յուրահատուկ նախնական ծրագրեր: Օրինակ՝ բնագիտության մեջ էվոլյուցիոն մոտեցման

տեսանկյունից օբյեկտների ուսումնասիրությունը սկսվել է միայն 19-րդ դարից՝ Չ. Դարվինի ուսմունքից հետո, մինչդեռ փիլիսոփայության մեջ այդ ժամանակ արդեն ստեղծվել էր ինքնազարգացող օբյեկտների տեսական իմաստավորման համար անհրաժեշտ հասկացական ապարատը (հատկապես Հեգելի փիլիսոփայական համակարգում):

• Փիլիսոփայության կարևոր ստեղծագործանպաստ առանձնահատկություններից է **հարաբերապաշտությունը և պլյուրալիզմը**: Ի տարբերություն կոնկրետ գիտությունների, փիլիսոփայությանը իր ողջ պատմության ընթացքում ուղեկցել են հարաբերականության և անկայունության գաղափարները:

Անկայունության և հարաբերականության ընդունումը ետոչդասական գիտության բնորոշ առանձնահատկությունն է, և ամենևին էլ պարտություն չէ գիտության համար, այլ ընդհակառակը՝ այս աշխարհի յուրահատուկ բնույթը հաշվի առնող, նոր փորձնական և տեսական հետազոտությունների հրավեր: Փիլիսոփայության հակվածությունը դեպի հարաբերապաշտություն և պլյուրալիզմ ունի բազմաթիվ պատճառներ: Ընդհանուր առմամբ, այն արտացոլում է §մարդ-աշխարհ¦ համակարգի ընդհանուր հատկությունների և հարաբերությունների որակական բազմազանությունը, ինչպես նաև մարդկային մտածողության ազատությունը: Առանց յուրաքանչյուր առանձին մտածող սուբյեկտի մտքի ազատության՝ ստեղծագործումը հնարավոր չէ: §Գիտությունը ձգտում է վեր կանգնել անհատական ճշմարտություններից հասնել համամարդկային ճշմարտություններին՝ վերացարկվելով անձնականից: Որքանով, որ դա հնարավոր է, գիտությունը որոնում է համամարդկային սեռային ճշմարտություններ: Սակայն մարդու մեջ միշտ գոյություն ունի անձնական ճշմարտությունը՝ որպես իր անհատականության գոյության ձև և այդ ճշմարտության վրա գործադրվող ճնշումները առաջանում են սեփական ճշմարտությունը ունենալու իրավունքի գիտակցումից բխող հակազդեցություն: Սեռային ճշմարտությունը չի բավարարում մարդուն լրիվությամբ հենց այն պատճառով՝ որ նա ոչ միայն Homo sapiens տեսակի ներկայացուցիչ է, այլ նաև անկրկնելի անհատակություն¦[2, էջ 44]:

Փիլիսոփայությունը հնարավորություն է տալիս մտածող սուբյեկտին դրսևորելու իր անկրկնելի անհատականությունը, բարձրացնելու իր սեփական ճշմարտությունը: Փիլիսոփայական հիմնախնդիրները հավերժ են, դրանք շարունակ մտածվում, վերամտածվում և վերափոխվում են, ինչի արդյունքում հիմնախնդիրը մնում է նույնը, իսկ դրա լուծման ձևերը՝ պայմանավորված փիլիսոփայական ուսմունքը ստեղծողի անահատականությամբ և նրա ապրած դարաշրջանով՝ փոփոխվում է: Փիլիսոփայությունը հայտնաբերում և բարձրացնում է հիմնախնդիրը և ուրվագծում այն ամենալայն շրջանակը, որի սահմաններում հնարավոր են պատասխանների տարբերակները: Մեծանուն փիլիսոփաներից յուրաքանչյուրը պնդել է իր փիլիսոփայական համակարգի ճշմարտացիությունը և փորձել է հիմնավորել այդ համակարգի հիմքում ընկած սկզբունքները: §Փիլիսոփայության մեջ ընդհանրապես հնարավոր չէ պնդել, թե որևէ փիլիսոփա մոլորված կամ սխալ է եղել. յուրաքանչյուրը բացահայտել է իր ճշմարտությունը և դարձել նոր փիլիսոփայական ավանդույթի հիմնադիր կամ էլ ձուլվել արդեն գոյություն ունեցող ավանդույթին: Նույնիսկ սուբյեկտիվ իդեալիզմի և սոլիպսիզմի ամենածայրահեղ տարատեսակները, փիլիսոփայական տեսանկյունից անհերքելի են: Այդպիսինն է փիլիսոփայության բնույթը¦[4, էջ 124] :

Փիլիսոփայության պլյուրալիստական բնույթը ստեղծագործանպաստ է, քանի որ նորի ստեղծումը կամ առաջացումը նույնպես ենթադրում է պլյուրալիզմ: Նորի առաջացումը ենթադրում է համակարգի ոչ գծային զարգացում, իսկ ոչ գծայնությունը համակարգի

էվոլյուցիայի ուղիների հնարավոր բազմազանությունն է և այդ այլընտրանքներից մեկն ընտրելու հնարավորությունը:

Այսպիսով, ստեղծագործականությունը ենթադրում է զարգացման այլընտրանքայնություն, ինչն իր հերթին ենթադրում է պլյուրալիզմ և հարաբերապաշտություն, պայմանով՝ որ դրանք լինեն չափավոր և չվերածվեն ամենաթողության: Պլյուրալիզմը չի ենթադրում տեսական-ճանաչողական անարխիզմ կամ ռացիոնալության բոլոր կանոնների ոտնահարում: Գոյություն ունեն պլյուրալիզմի հնարավոր սահմաններ, մրցակցող տեսություններից լավագույնի ընտրության չափանիշներ:

• Որպես ստեղծագործականությանը նպաստող կարևոր փիլիսոփայական սկզբունք, սույն ուսումնասիրության արդյունքում առանձնացվում է նաև **ռացիոնալի և իռացիոնալի միասնությունը:**

Սիներգետիկական հիմնավորում է, որ նորի առաջացումը կատարվում է ինքնազարգացող դիսսիպատիվ համակարգերում, որտեղ քաոսը և կարգավորվածությունը հավասարակշռված են: Մտածական գործընթացների համար կարգավորվածություն ասելով սովորաբար հասկանում ենք մտքերի կանոնավորվածությունը, տրամաբանվածությունը, դիսկուրսիվ լինելը: Դրան հակառակ՝ մտածողության աշխարհը իր քաոտիկ շարժման մեջ ենթադրում է մտքերի անորոշությունը, ինտուիտիվ, ոչ դիսկուրսիվ լինելը, իռացիոնալությունը: Այսպիսով՝ եթե բնության մեջ նորի առաջացմանը ուղեկցում է քաոսի և կարգավորվածության որոշակի զուգորդվածության վիճակ, ապա գիտակցության մեջ նորի առաջացմանը ուղեկցում է ռացիոնալի և իռացիոնալի որոշակի զուգորդվածության վիճակ: Իսկ փիլիսոփայությունը աշխարհաճանաչողության այն ձևն է, որը կարծես ակամա՝ իր բնույթից ելնելով, հակված է հավասարակշռել ռացիոնալի և իռացիոնալի մասնակցությունը ճանաչողության մեջ:

Գիտության պատմության փորձը, ցույց է տալիս, որ փիլիսոփայության մեջ մտահայեցողությունը և նույնիսկ գոյաբանական մտակառուցումները կարող են նոր տեսանկյուններ բացել աշխարհի գիտական պատկերի մեջ և նպաստել իրականության ճանաչմանը: Մտահայեցողությունը և մետաֆիզիկան միշտ եղել են փիլիսոփայության էությունը, իսկ մետաֆիզիկական լինելն ինքնին ենթադրում է ճանաչողության իռացիոնալ-ինստիտուտիվ գործառույթ: Բայց փիլիսոփայական ինտուիտիվ, ապրիորի գիտելիքը չի հենվում միայն հավատի վրա, դա խորհրդապաշտական ինտուիցիա չէ: Փիլիսոփայությանը բնորոշ է ռացիոնալության գաղափարին հետևելը, այսինքն որոշակի յուրահատուկ համակարգային-կազմակերպված, օբյեկտիվորեն ճշմարիտ, փոփոխությունների նկատմամբ բաց գիտելիքների ձեռքբերումը: Այն փաստը, որ փիլիսոփայական ինտուիտիվ գիտելիքն անգամ պահպանում է իր որոշակի ռացիոնալությունը, կարելի է հիմնավորել կրոնական ինտուիցիայի հետ համեմատելով: Եթե կրոնական ինտուիտիվ դատողությունները փորձով չեն ստուգվում նույնիսկ այն դեպքում, եթե տրամաբանական հակասություն են պարունակում, ապա փիլիսոփայական ինտուիտիվ դատողությունը իրավունք չունի տրամաբանական հակասություն պարունակելու: Եթե ինտուիտիվ հավատը հաճախ հակասության մեջ է ընկնում ֆիզիկական աշխարհի հատկությունների հետ (դրական գիտելիքի հետ), ապա փիլիսոփայական ինտուիտիվ դատողության համար այդ հակասությունը նույնպես բացառված է:

Փիլիսոփայական գիտելիքը չի կարող նույն չափով բավարարել ռացիոնալության չափանիշներին, ինչպես որ կոնկրետ գիտությունները, իր էմպիրիկ հիմքի հսկայածավալության պատճառով: Սահմանային ընդհանրության և արժեքային-աշխարհայացքային կողմնորոշման

շնորհիվ փիլիսոփայությունն ավելի մտահայեցողական է, ռեֆլեքսիվ և դրա հետ մեկտեղ՝ պակաս խիստ ապացուցելի:

Այսպիսով՝ փիլիսոփայության նպաստավոր ազդեցությունը գիտությունների զարգացման վրա պայմանավորված է նրանում ռացիոնալի և իռացիոնալի հակադրամիասնության վառ արտահայտմամբ:

• Գիտության զարգացմանը նպաստող փիլիսոփայության յուրահատուկ սկզբունք կարելի է համարել **ամբողջականացման միջոցով աշխարհի համազիտական պատկերի ստեղծումը**, ինչը մարդկային ողջ ճանաչողական հնարավորությունների փիլիսոփայական ամբողջացումն է: Փիլիսոփայական գիտելիքի ճանաչողական գործառույթն արժևորվում է հենց մասնավոր գիտական փորձի ընդհանրացմամբ: Փիլիսոփայական ընդհանրացումն ունի էվրիստիկական մեթոդաբանական §զորություն¦: §Գիտելիքն առհասարակ միայն նպատակը կամ արդյունքը չէ իմացության, այլև ամենուր միջոց է ծառայում հետագա ճանաչողական ակտերի համար: Եվ որքան առարկայական առավել լայն շրջանակների է վերաբերում գիտելիքը, կամ որքան մեծ ընդհանրացում է այն բովանդակում, նույնքան նշանակալից է նրա էվրիստիկական-մեթոդաբանական նշանակությունը¦[1; 20]: Որպես իրականության յուրացման առավել ամբողջական ձև, փիլիսոփայությունն իրավունք է նվաճում իր սկզբունքների և գաղափարների հիման վրա իրականացնել կոնկրետ գիտությունների առարկայական բովանդակությունների, ինչպես նաև ճանաչողության մյուս ձևերի (արվեստ, բարոյականություն, կրոն և այլն) յուրահատուկ սինթեզ և առաջացնել աշխարհի համազիտական պատկերը:

Գիտության զարգացման ընթացքի վրա փիլիսոփայության ունեցած կարևոր ազդեցության վկայություն կարելի է համարել հենց այն փաստը, որ արդեն կայացած, իրենց մեթոդների որոշակիությամբ և խստությամբ աչքի ընկնող, զարգացած գիտություններն ու տեսությունները չեն զգում փիլիսոփայության կարիքը, այն դեպքում, երբ նոր ձևավորվող տեսություններն ու իր առարկայի և մեթոդների մեջ դեռևս չկողմնորոշված երիտասարդ գիտությունները չեն կարող կայանալ առանց փիլիսոփայության: Այդ պատճառով էլ գիտության զարգացման համար խիստ անհրաժեշտ է կենդանի փիլիսոփայական բնազդի օգնությունը [5; 3]:

Իրենց սեփական հմտությունների ինքնանդրադարձի ընթացքում, գիտություններն ակամա դիմում են փիլիսոփայությանը, որը մի կողմից պայքարում է գիտապաշտության դեմ, բայց մյուս կողմից էլ՝ գիտության մերժման [4; 69]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Շաքարյան Հր., Փիլիսոփայություն: Եր., 2005, էջ 20:
2. Гореллов Л.Л., Истины и споры. // Многомерность истины. М., 2008, с. 44.
3. Гурина М., Философия. М., 1998, с. 69.
4. Князева В. А., Истина как результат коэволюции. // Многомерность истины. М., 2008, с. 124.
5. Merleau – Ponty M., Signes. Paris, 1960. p.3.

РЕЗЮМЕ

Переосмысление эвристической роли философии

Анна Акопян

Ключевые слова: классическая гносеология, развитие науки, эвристическая роль, синергетика, постмодернизм, неклассическая эпистемология.

Тема роли философии в научном познании – одна из самых актуальных в философии и методологии науки.

В статье обосновано, что в результате развития науки основные понятия и принципы классической гносеологии и методологии переоцениваются, создавая необходимость переосмысления эвристической роли философии.

Анализируются внутренние, присущие философии т.е. гносеологические характеристики, которыми обусловлен философский эвристический потенциал.

SUMMARY

The reassessment of philosophy's heuristic role

Anna Hakobyan

Keywords: classical gnoseology, scientific development, heuristic role, synergy, postmodernism, not classical epistemology.

The role of philosophy in scientific knowledge is one of the most actual issues in philosophy and methodology of science.

The article provides evidence that as a result of scientific development the main concepts and principles of classical gnoseology and methodology are re-evaluated, thus putting forward the necessity for reassessment of philosophy's heuristic role. It analyzes the gnoseological characteristics, typical of philosophy, that define the heuristic potential of the latter.